

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Ամբիոնի դասախոս

Հաստատում եմ

Ռեկտոր՝ _____
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

«29» դեկտեմբերի 2020թ.

1. Ընդհանուր դրույթները

- 1.1 Ամբիոնի դասախոսին Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության և «Պրոֆեսորադասախոսական կամի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգ»-ի համաձայն պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:
- 1.2 Ամբիոնի դասախոսը ենթակա և հաշվետու է անմիջապես ամբիոնի վարիչին և դեկանին՝ յուրաքանչյուրի իրավասությունների շրջանակներում:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

Ամբիոնի դասախոսը.

- 2.1. ունենա բարձրագույն կրթություն (առնվազն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան),
- 2.2. իմանա ոլորտի նորմատիվ իրավական հենքը (ՀՀ Սահմանադրություն, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտեր), կրթական պետական չափորոշիչները, ինչպես նաև ամբիոնի գործառույթների և առնչվող ներքին իրավական ակտերը,
- 2.3. ունենա մասնագիտական և մանկավարժության հմտություններ,
- 2.4. կարողանա և՛ բանավոր, և՛ գրավոր հաղորդակցվել օտար լեզուներով¹ և գերազանց հայերեն լեզվով,
- 2.5. տիրապետի համակարգչով և այլ ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություններին:

3. Պաշտոնեական պարտականությունները

Ամբիոնի դասախոսը պետք է՝

- 1.1. մասնակցում է ամբիոնին առաջադրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը,
- 1.2. մասնակցում է Համալսարանի գործունեության ընթացքում գիտական և այլ հարցերին առնչվող որոշումների կայացմանն ու իրականացմանը,
- 1.3. դասախոսություններ է վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերով,

¹ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի A2 և B1 մակարդակին համապատասխան

- 1.4. վարում է սեմինարներ, գործնական և լաբորատոր պարապմունքներ ուսանողներին տրամադրում է գիտական խորհրդատվություն,
- 1.5. սահմանված կարգով ղեկավարում է կուրսային և ավարտական աշխատանքներ (առանձնահատուկ դեպքերում մագիստրոսական թեզեր),
- 1.6. ղեկավարում է ուսումնական, մասնագիտական և գիտամանկավարժական պրակտիկաներ
- 1.7. իրականացնում է գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ,
- 1.8. զեկուցումներով հանդես է գալիս հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- 1.9. իրականացնում է պահանջներին համապատասխան՝ առարկայական ծրագրերի մշակում և կատարելագործում,
- 1.10. մասնակցում է ամբիոնի նիստերին:

3. Իրավունքները

Ամբիոնի դասախոսը իրավունք ունի՝

- 3.1. ընտրել և ընտրվել Համալսարանի համապատասխան պաշտոններում և մարմիններում,
- 3.2. մասնակցել Համալսարանին վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,
- 3.3. օգտվել գրադարանների տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- 3.4. ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ ու միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակը,
- 3.5. ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար,
- 3.6. կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և այլ մասնագետներից պահանջել իր պաշտոնական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,
- 3.7. օրենքով սահմանված կարգով բողոքարկել ղեկավարության հրամանները և կարգադրությունները:

4. Պատասխանատվությունը

Ամբիոնի դասախոսը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում.

- 4.1. Համալսարանի ղեկավարության հանձնարարությունները, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով իրեն վերապահված պարտականությունները չկատարման և(կամ) ոչ պատշաճ որակով կատարելու համար,
- 4.2. իրեն վերապահված լիազորությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ վերազանցման համար,
- 4.3. իր պարտականությունների կատարման ընթացքում թույլ տված իրավախախտումների համար,
- 4.4. իր գործունեության կամ անգործության արդյունքում Համալսարանին նյութական վնաս պատճառելու համար